ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՂԱԶԱԶՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշավան Ղազազյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սայաթ-Նովայի պողոտայի հ.18 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՈՒՇԱՎԱՆ ՂԱԶԱԶՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշավան Ղազազյանը ծնվել է 1922 թ. մարտի 18-ին, Վրաստանում:

Ավարտել է Վրաստանի Շուլավեր ավանի միջնակարգ դպրոցը, մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, ապա զորացրվել է որպես պատերազմի հաշմանդամ:

1946թ. ընդունվել է Երևանի բժշկական ինստիտուտը, որն ավարտել է գերազանցության դիպլոմով, ապա շարունակել է կատարելագործվել իր մասնագիտական գծով:

1957թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Դիֆթերիայի կլինիկահամաճարակաբանական առանձնահատկությունները և կանխարգելիչ միջոցառումների արդյունավետությունը» թեմայի վերաբերյալ:

1970թ. պաշտպանել է «Տարբեր ուղեկցող հիվանդությունների ազդեցությունը վիրուսային հեպատիտի ընթացքի և ելքերի վրա» թեմայով դոկտորական թեզը:

1972թ. ստացել է պրոֆեսորի կոչում:

1973թ. պրոֆեսոր Անուշավան Ղազազյանը ղեկավարել է Երևանի բժշկական ինստիտուտի ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնը: Ստեղծել է Հայաստանի ինֆեկցիոնիստների գիտական ընկերությունը և եղել այդ ընկերության առաջին նախագահը:

Անուշավան Ղազազյանը մեծ ներդրում ունի համաճարակաբանության, ինֆեկցիոն և աղիքային հիվանդությունների ուսումնասիրության բնագավառում:

Անուշավան Ղազազյանը եղել է ԽՍՀՄ-ի առավել ճանաչված ինֆեկցիոնիստներից: Նրա առանձին աշխատանքները բարձր են գնահատվել ոչ միայն ԽՍՀՄ-ում, այլ նաև ԱՄՆ-ում և Եվրոպայի մի շարք երկրներում:

Անուշավան Ղազազյանի գործունեությունն արժանացել է մարտական, կառավարական և աշխատանքային պարգևների, այդ թվում Երևանի Մխիթար Հերացու անվան պետական համալսարանի ոսկե մեդալով:

Անուշավան Ղազազյանը կյանքից հեռացել է 2009թ.:

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշավան Ղազազյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սայաթ-Նովայի պողոտայի հ. 18 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է Անուշավան Ղազարյանի դուստր՝ Կարինե Ղազազյանի կողմից: Հուշատախտակի տեղադրման ծախսերն իրականացվելու են Անուշավան Ղազազյանի ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում

պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ